ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի
առաջին կարգի մասնագետ
/ծածկագիր՝ 64-4.2-7/

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին, Մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի ուսումնասիրմանը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը, Մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգ) հիմնահարցերի ուսումնասիրման, զոհերի սոցիալական վերականգմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին, Մարզում հայտանաբերված կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգ) զոհերին համապատասխան գերատեսչություններ և կառույցներ ուղղորդելուն, իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի արխիվացման և պահպանման աշխատանքները.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի առողջապահություն մասնագիտությունների գծով կամ սոցիալական աշխատանք կամ սոցիալական մանկավարժություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն՝ առաց աշխատանքային ստաժի.
- նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ,,բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրի գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում /Ցանկեր N 1,2/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում՝ /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի /թաստաթղթերի/ պատճեն /պատճենները/
- աշխատանքային գրքույկի պատճենը՝/ ունենալու դեպքում/
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար 3.4 չափսի.

- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 13^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է <<13 >> հուլիսի 2016թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ /ք.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7, հեռ. 0264-2-43-76/:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ